ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ. Նորահայտ փաստաթղթեր, կազմող՝ Համո Սուքիասյան, *Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019, 120 էջ *:*

Բանալի բառեր՝ Թումանյան, նորահայտ փաստաթղթեր, Հայ հայրենակցական միությունների միություն, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդ, վավերագրեր:

Հովհ. Թումանյանի 150-ամյակին նվիրված ոչ մեծաքանակ հրատարակությունների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի պ. գ. թ., դոցենտ Համո Սուքիասյանի կազմած և ծանոթագրած "Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր" (խմբագիր՝ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան) խորագրով փաստաթղթերի ժողովածուն: Նկատենք, որ Թումանյանի մասին հոբելյանական գիտական հրատարակությունները հիմնականում իրականացվեցին ՀՀ ԳԱԱ գրականության և պատմության ինստիտուտների կողմից՝ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի նյութական աջակցությամբ:



Տասնամյակներ շարունակ՝ գրեթե մի ամբողջ դար, հատկապես խորհրդային տարիներին թումանյանագիտության և հայագիտության այլ ոլորտների ուսումնասիրության կենտրոնում եղել են Հովհ. Թումանյանի գեղարվեստական երկերը: Անցյալ դարի 60-ական թվականներից անվանի թումանյանագետներ Էդ. Ջրբաշյանը, Ա. Ինճիկյանը, Հր. Թամրազյանը, Լ. Հախվերդյանը, Մ. Ջանփոլադյանը և այլք ստեղծեցին արժեքավոր ու մնայուն աշխատություններ: Այնուամենայնիվ, քաղաքական հասկանալի պատճառներով Թումանյանի կյանքի ու գործունեության բազմաթիվ դրվագներ և պոետի ազգային գործունեության առանձին ոլորտներ մատնվել են անուշադրության, շրջանցվել կամ պարզապես հպանցիկ շեշտադրումներով միտումնավոր ու սխալ մեկնաբանվել: Երևույթ, որը պայմանավորված է երկու հանգա-մանքով. առաջին՝ բանաստեղծի գործունեությունը հիմնականում ազգային ուղղվածություն ուներ, հետևաբար, քաղաքական կաշկանդում-ների պայմաններում նրա լուսաբանումը թերի կլիներ, և երկրորդ՝ Թումանյանը եղել է հիմնականում գրականագետների և ոչ պատմաբանների կամ հումանիտար ոլորտի այլ գիտնականների ուշադրության կենտրոնում, մինչդեռ բանաստեղծը շատ ավելի արտասովոր

---

* *Ներկայացվել է 25. XI. 2019 թ., ընդունվել է տպագրության 17. XII. 2019 թ.:*

երևույթ է, քան կոնկրետ անհատ, քանի որ իր կարճ կյանքի ընթացքում կարողացել է գործել ազգային ու հանրային կյանքի հնարավոր բոլոր բնագավառներում և ամենուր եղել առաջնակարգ ու առաջնորդ: Հետևաբար, Ամենայն հայոց բանաստեղծի՝ հատկապես ազգային գործունեությունը գիտական լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Հենց այս համատեքստում պետք է գնահատել Հ. Սուքիասյանի խնդրո առարկա ժողովածուն:

Առաջաբանում հեղինակը ներկայացնում է Թումանյանի գործունեությունը լուսաբանող, նոր բացահայտումների հիմք հանդիսացող փաստաթղթերի բնույթը, ժամանակագրությունը, ձեռքբերման աղբյուրները և գիտական կառուցվածքային այն մոտեցումները, որոնցով ներկայացված են վավերագրերը:

Ժողովածուում զգալի թիվ են կազմում Հայ հայրենակցական միությունների միության (ՀՀՄՄ) պատմությանը վերաբերող նյութերը, որոնք լրացնում են նաև Թումանյանի կենսապատումը, քանի որ այդ միությունը գործել է բանաստեղծի նախա-գահությամբ: Ուշագրավ են նաև Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ) նիստերի արձանագրությունները: Ժողովածուում զետեղված բանաստեղծի՝ 1918 թ. մարտի 30-ի ելույթները վրիպել են նույնիսկ նրա տարեգրությունը կազմողների հայացքից, մինչդեռ հումանիստ բանաստեղծի խոսքերը հայ ժողովրդին "ինչ գնով էլ լինի" բնաջնջումից փրկելու մասին են, դարավոր թշնամու հետ կռիվը շարունակելու, միաժամանակ խաղաղ թուրք ազգաբնակչության նկատմամբ "էքսցեսներ" թույլ չտալու համար "ամեն միջոց գործ դնելու" մասին (էջ 10): Աշխատանքում ներառված են նաև Ալեքսանդրապոլում 1918 թ. ապրիլի 8-ի հայ ղեկավար գործիչների արտակարգ խորհրդակցության, ՀԱԽ-ի մայիսի 19-ի, հունիսի 24-ի, հուլիսի 6-ի նիստերի և այլ արձանագրություններ: Որոշ փաստաթղթեր էլ հավաստում են ՀՀՄՄ գոյության ու գործունեության անհրաժեշտությունն ու կարևորությունը ժամանակի համար (էջ 38–40):

Պատմական վավերագրերի շարքում ներառված են նաև Թումանյանի ստորագրությամբ պաշտոնական հեռագրեր ու նամակներ, որոնք առայսօր տեղ չեն գտել բանաստեղծի գիտական հրատարակություններից և ոչ մեկում: Ինչպես բանաստեղծի կենսապատումի, այնպես էլ հայ ժողովրդի պատմության տվյալ շրջափուլի համար արժեքավոր են մասնավորապես Կ. Պոլսում գտնվող հայ պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանին հասցեագրված Բաթում գործուղված պատվիրակության՝ 1918 թ. հուլիսի 4-ի ծավալուն նամակը Էսսադ փաշայի հետ բանակցությունների մասին, ՀՀՄՄ գրությունները Վրաստանի ՀԱԽ-ին (1918 թ. սեպտեմբերի 13, հոկտեմբերի 2, 11), ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի հրավերը Հաշտության համագումարին հուշագիր ներկայացնելու համար գումարվող հանձնաժողովի նիստին մասնակցելու մասին (1918 թ. նոյեմբերի 1), բանաստեղծի դիմում-գրությունը ՀԱԽ գաղթականական բաժնին՝ Ղազախի

հայությանն օգնելու խնդրանքով (1919 թ. մարտի 24), Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի անունից Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանն ուղղված գրությունը (1919 թ. հունիսի 28), ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարությանն ուղղված դիմումը հայ գրողներին նպաստ հատկացնելու մասին և այլն: Տասնյակ փաստաթղթեր հավաստում են ՀՀՄՄ և ՀԱԽ համագործակցությանն ուղղված բանաստեղծի ջանքերի մասին:

Ժողովածուում մի առանձին խումբ են կազմում բանաստեղծի կեսդարյա և 60-ամյա հոբելյանների հետ կապված փաստաթղթերը: Իհարկե, այս վավերագրերի մի մասի բովանդակությունն ինչ-որ չափով հայտնի էր պարբերական մամուլից, սակայն վավերագրական ճշգրտությամբ ներկայանում են առաջին անգամ: Դրանք վկայում են, որ բանաստեղծն իր ժամանակակիցների կողմից գնահատվել ու փառաբանվել է շատ ավելի, քան նրա սերնդակից հանճարներից ու գործիչներից որևէ մեկը: Այդ վավերագրերում Թումանյանը հռչակվել է հայ ժողովրդին դեպի արև ու ազատություն առաջնորդող "մարգարե", ժամանակի թանձր խավարը ճեղքող "ազգային հոգու կրակ", "սուրբ զգացմունքներով և ճշմարտության... իսկական առաջնորդ", ով միշտ իր ազգի կողքին է եղել "ձախորդության թէ փորձանքի ժամին", "ազգային հոգու ձյունապատ բարձունքներից" ազգի գոյության հեռուները նայող, ազգի "վիշտն ու ցաւը, իր յոյսն ու լոյսը, իր ժպիտն ու թախիծը" կախարդիչ հնչյուններով երգող բանաստեղծ: Եվ այս խոսքերի տակ ստորագրել են 21 հայրենակցություններ, այդ թվում՝ Ղարաբաղի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Կարսի, Նախիջևանի, Լոռու ներկայացուցիչները:

Ինչպես թումանյանագիտությանը, այնպես էլ պատմագիտությանը հայտնի են 1921 թ. փետրվարյան ապստամբության օրերին Թումանյանի գործունեությունը: Նրա կյանքի դրամատիկ ու ողբերգական օրերը կապվում են ինչպես ցեղասպանության տարիների հետ, երբ դարավոր թշնամին էր թափում հայի արյունը, այնպես էլ՝ 1921 թ. ժողովրդական ապստամբության ու քաղաքացիական զինված բախումների հետ, երբ արթուն էր ներքին թշնամին, և հայն էր ոթում հայի արյունը: Թումանյանը, վտանգելով իր կյանքը, անցնում է կրակահերթերի միջով և հասնում Երևան հաշտարար առաքելությամբ, ինչը, ցավոք, բանաստեղծին չի հաջողվում: Երկու կողմերն էլ դժգոհ էին, նրանց թվում էր, թե Թումանյանն այս կամ այն կուսակցության շահն էր պաշտպանում, մինչդեռ բանաստեղծն ազգային շահից բացի այլ շահ չուներ: Նրա կյանքի՝ հատկապես այս շրջափուլի մասին ժամանակակիցների հուշերում հաճախ են հանդիպում իրարամերժ կարծիքներ ու գնահատականներ: Այս իմաստով առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում պահպանված փաստաթղթերը: Դրանց հրապարակման սկիզբը դրեց ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը՝ "Պատմա-բանասիրական հանդես"-ի 1988 թ. № 2-

ում հրապարակելով Թումանյանի “Իմ Երևան գալու առիթով” հոդվածը: Հ. Սուքիասյանը հրապարակել է Թումանյանին ուղղված բոլշևիկների ռադիոհեռագիրը, որից պարզվում է Թումանյանի՝ 1921 թ. մարտի 21-ի Գ. Օրջոնիկիձեին ուղղված հեռագիրը բոլշևիկները բռնագրավել են: Հրավիրելով բանաստեղծին տեղափոխվել բոլշևիկյան ճամբար՝ ռադիոհեռագրի հեղինակներն արտահայտում են իրենց դժգոհությունը Թումանյանից. “Ձեր միակողմանի տեղեկատվությամբ, ինքներդ էլ չգիտակցելով, վատ ծառայություն եք մատուցում հայ աշխատավոր ժողովրդին” (էջ 62):

“Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր” ժողովածուում զետեղված են նաև բանաստեղծի կյանքի վերջին սխրանքի՝ Հայաստանի օգնության կոմիտեի գործունեության, նրա՝ Կ. Պոլիս ուղևորության հետ կապված վավերագրեր, որոնցում պահպանվել են Թումանյանի ելույթների սղագրությունները:

Հատկանշական է, որ գրքում ներառված փաստաթղթերը (1923 թ. մարտի 28, մայիսի 29, 1925 թ. ապրիլի 19) վերաբերում են նաև Թումանյանի մահից հետո նրա ընտանիքի, զավակների, մասնավորապես, Համլիկի կյանքի դժվարություններին: Խորհրդային իշխանություններին ուղղված նրանց դիմումների մի մասը մերժվում էին քաղաքական նկատառումներով:

Քանի որ ժողովածուում փաստաթղթերը զետեղված են ժամանակագրական կարգով, այն եզրափակում են բանաստեղծի 60-ամյակին առնչվող վավերագրերը, որոնք միաժամանակ Հայաստանի խորհրդային շրջանի տվյալ փուլի հանրային-քաղաքական կյանքի, գրական բարքերի, ժամանակի գաղափարական կաշկանդումների վառ արտահայտություններ են: Իհարկե, գնահատվում էր Թումանյանի մեծությունը, և լայնածավալ համընդհանուր միջոցառումներ էին ծրագրվում կրթական բոլոր հաստատություններում, գրադարաններում, թանգարաններում, կազմակերպվում էին մեծարանքի երեկոներ, հանդեսներ, թումանյանական շաբաթներ ամենուր, այդ թվում՝ բանակում, հրատարակվում էր բանաստեղծի գործերի ու նրա կյանքի և գործունեության մասին գրականություն, ու այս ամենի համար հանձնարարվում էր ՀՍԽՀ լուսժողկոմ Ա. Մռավյանին գտնել համապատասխան դրամական միջոցներ: Այնուամենայնիվ, անկախ հոբելյանը, ըստ ամենայնի, պատշաճ նշելու իշխանության ջանքերից, գրվում էին հոդվածներ, նաև իշխանական շրջաններից հնչում էին կարծիքներ, մեղադրանքներ Թումանյանի ստեղծագործության ազգայնականության մասին: Լինում էին դեպքեր, երբ արգելվում էին որոշ հեղինակների՝ [Վ. Մահիկյան (Երեմյան), Գ. Վանանդեցի, Պ. Մակինցյան] բանաստեղծի մասին այլակարծություն չհանդուրժող բոլշևիզմի դիրքերից գրված հոդվածները: Լուսժողկոմատի գրության մեջ Թումանյանը բնութագրվում է “նացիոնալիստ”, որի “իդեոլոգիան ռեակցիոն է և ուտոպիստական”: Ն. Դաբաղյանի թեզիսներում Թումանյանը ներկայացվում է

իբրև դաշնակցական, որը, թեև հրաժարվել է անդամությունից, սակայն չի հրաժարվել "ազգայնական գործունեությունից" և իր "Հայոց լեռներում", "Հայոց վիշտը", "Մեր նախորդներին" ու այլ գործերում "պասիվ նացիոնալիզմի", "կրոնական բարոյախոսական, միստիկական, իդեալիստական աշխարհզգացողության" արտահայտիչ է, հաճախ հայացքն ուղղում է նահապետական անցյալն ու իդեալականացնում այն, "ֆետիշացնում է" բնությունը, չի պատկերացնում ազգամիջյան ընդհարումների դասակարգային պատճառները, պացիֆիստ է և այլն, և այլն:

Աշխատությանը կցված է հավելված՝ անձնանունների և տեղանունների ցանկերի ընդգրկումով: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված փաստաթղթերի ժողովածուն մեծ չէ, սակայն հարուստ է ծանոթագրություններով, որոնք գիտական ճշգրիտ տեղեկատվությամբ մեկնում և ավելի հստակեցնում են վավերագրերի բովանդակությունը: Ցանկալի է, որ աշխատանքն իր շարունակությունն ունենա և ստեղծվի Ամենայն հայոց բանաստեղծի ազգային գործունեությունը լուսաբանող մի ստվարածավալ հատոր, որը նոր լույս կսփռի ոչ միայն Թումանյանի կյանքի, այլև XX դարի առաջին երկու տասնամյակների պատմության վրա:

Հ. Սուքիասյանի "Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր" ժողովածուն արժեքավոր ներդրում է թումանյանագիտության մեջ:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ դասական գրականություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 10 մենագրության և շուրջ 200 գիտական հոդվածի: sushovh@mail.ru